ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի ապրիլի 14-ից 20-ը
Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Սենիկ Ներսիսյան

Ֆելիքս Մելքոնյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային գործառնությունների կազմակերպման բաժնի պետ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության Եվրասիական տնտեսական միության օրենսդրության մեթոդական ապահովման բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, ս.թ. ապրիլի 14-ից 20-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Եվրասիական տնտեսական միության շջանակներում մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբին կից փորձագիտական խմբի հերթական նիստի անցկացման նպատակը «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության նախագծի՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում ներպետական համաձայնեցման արդյունքների քննարկումն էր: Արձանագրության նախագծով նախատեսվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքում առաջնահերթ համարվող փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացումը:

6. Քննարկված թեմաները՝

Փորձագիտական խմբի նիստի ընթացքում քննարկվել են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության նախագծի՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում ներպետական համաձայնեցման արդյունքները, մասնավորապես՝

1) արձանագրության նախագծով նախատեսված՝ բեռնարկղերի՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով տեղափոխման առանձնահատկություններին առնչվող կարգավորումները՝ հաշվի առնելով մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի նիստի արդյունքները.

2) Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների տեղափոխմանն առնչվող առանձին հարցերի վերաբերյալ (պարտավորությունների կատարում, մաքսային վճարների գծով պարտավորությունների ծագման, դադարեցման կարգավորումներ) անդամ պետություններից ստացված առաջարկները՝ հաշվի առնելով մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի նիստի արդյունքները.

3) Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով անդամ պետությունների նավերում արտադրված ձկնային և այլ արտադրանքի փոխադրման և որպես Եվրասիական տնտեսական միության ապրանք ճանաչման հետ կապված կարգավորումները՝ հաշվի առնելով մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի նիստի արդյունքները.

4) «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի կիրառման առանձնահատկություններն ու պայմանները՝ հաշվի առնելով մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի նիստի արդյունքները.

5) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով առանձին կատեգորիայի օտարերկրյա ապրանքների փոխադրմանն առնչվող առաջարկները (ապրանքների փոխադրման ժամանակ «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի կիրառման առանձնահատկություններ)՝ հաշվի առնելով մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի նիստի արդյունքները.

6) «Կեղծ» տարանցման կանխարգելման առնչությամբ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքում առաջարկվող համապատասխան կարգավորումները՝ հաշվի առնելով մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի նիստի արդյունքները"

7) կանխիկ դրամական միջոցների՝ ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանով տեղափոխման կարգավորումներ՝ հաշվի առնելով մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի նիստի արդյունքները.

8) այլ կարգավորումներ (առաջարկների աղյուսակը կցվում է):

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումները տեղի են ունեցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հարթակում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան պաշտոնատար անձանց և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների և պետական այլ մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ գործարար համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են քննարկվող հարցերի վերաբերյալ համապատասխան առաջարկներ, դիրքորոշումներ, պարզաբանումներ, ՀՀ իրավակիրառ պրակտիկան, ինչի հիման վրա մշակվել են արձանագրության նախագծի համապատասխան դրույթները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Փորձագիտական խմբի նիստի արդյունքներով մշակվել են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության նախագծի համապատասխան դրույթները: Չհամաձայնեցված հարցերը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների նախաձեռնությամբ նախատեսվում է քննարկել համապատասխան աշխատանքային խմբի շրջանակներում: Փորձագիտական խմբի նիստի արդյունքներն ամփոփվել են համապատասխան արձանագրությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

«Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության նախագծի

առանձին դրույթների՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի շրջանակներում քննարկման արդյունքների ամփոփումից և առկա տարաձայնությունների լուծումից հետո նախատեսվում է արձանագրության նախագիծն ուղարկել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ՝ երկրորդ ներպետական համաձայնեցման ընթացակարգերի նպատակով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Սենիկ Ներսիսյան _____

Ֆելիքս Մելքոնյան _____

22.04.2024թ.